Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/8591/02/23

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

1-ը օգոստոսի 2023թ. քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը

նախագահությամբ՝ դատավոր Արամ Մկրտչյանի
քարտուղարությամբ՝ Արամայիս Ավետիսյանի
մասնակցությամբ՝
հայցվորների ներկայացուցիչ Արև Հարությունյանի
պատասխանողի ներկայացուցիչ Նազիկ Մալխասյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Խաչ-Արամ» ՍՊ ընկերության /պետական գրանցման համար 269.110.1200901, ք.Երևան, Ն.Չարբախ, 11 փող., տուն 2/ և «Էլլ-Գա-Ման» ՍՊ ընկերության /պետական գրանցման համար 52.110.01641, Արարատի մարզ, գյուղ Կանաչուտ, Այվազովսկու 6/ ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության /ք.Երևան, Մ.Մկրտչյան 5/, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն /ք.Երևան, Մելիք-Ադամյան 1/՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 31.03.2023թ. թիվ 596-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը մերժել:

2. «Խաչ-Արմ» ՍՊ ընկերության և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊ ընկերության հայցը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 31.03.2023թ. թիվ 596-Ա հրամանը:

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից հօգուտ «Խաչ-Արմ» ՍՊ ընկերության և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊ ընկերության համիրավության կարգով բռնագանձել 50000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը բռնագանձելու պահանջը մերժել:

5. Հայցի ապահովման միջոցը՝ պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հանել հայցվորներ «Խաչ-Արմ» ՍՊ ընկերությանը և «Էլլ-Գա-Ման» ՍՊ ընկերությանը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից, պահպանել մինչև վճռի կատարումը:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

7. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074
Date: 2023.08.01 12:14:05 AMT